





Սևան, Ա. Պատրելոց եկեղեցու ճար. դռը.
Севанъ. Дверь церкви св. Апостоловъ
Sevan. la porte de l'église de S. Apôtres




М. Севанъ.
Ц. св. Апостоловъ.

Սևան. Սույն ելոց
Եկեղեցի.

Sevan, Eglise de
S-tz Apôtres.




Ս. Առաքելոց եկ. դռան վարդապարփ
Севанъ. Розетка двери церкви св. Апостоловъ.
Sevan. Rosette de la porte de l'église de S. Apôtres.



М. Севанъ
Ц. св. Иоанна,

Սեւան. Ս. Կարապետի
Եկեղեցի

Sevan, Eglise
de s. Jean.



М. Севан.
Ц. св. Богородицы.

Սևան. Ս. Աստվածածնի
եկեղեց

Sevan, Eglise
de Sainte Vierge

ՍԵՒԱՆ

Ե ԼԱԼԱՑԵԱՆԻ

Սեւանոյ կղզին.—Պատմական տեսութիւն.—Վանքի պատմական էվոլյուցիան.
Միբանաների կեանքը.—Վանքի նկարագրութիւնը.—Վանքի որբութիւնները,
հեղեղական զարգերն և անօթները.—Վանքի ձեռագիրները.—Վանքի կալուսն-
ները.—Արձանագրութիւնները.—Տապանագիրները:

Սեւան կղզին.—Սեւանի հոգեպարար վանքը յաւերժական ան-
դորրութեամբ հանգչում է համանուն կղզու կատարին, իբրև ար-
տայայտութիւն մարկային հոգու դէպի բնութեան անհուն գեղեց-
կութիւնը տածած խոր զգացմունքի:

Կղզին փայլում է Գեղամայ գեղածիծաղ լճում որպէս մի
գոհար՝ կապտագոյն, յստակ կոհակների մէջ, հրապուրելով աշ-
խարհային յոյզերից ուժասպառ՝ խաղաղութեան կարօտ հոգիները:

Կղզին գտնում է լճի արևմտեան ափից մօտ երկու կիլո-
մետր հեռու, 63°40'30"-40°34'38" աստիճանների տակ. հրարդ-
խային ծագումն ունի և ներկայացնում է մի լայնանիստ ըլուր՝
լճի մակերևոյթից 450 ոտնաչափ բարձր, ձգուած արևմտափից
դէպի արևելք, մօտաւորապէս մի կիլոմետր երկարութեամբ և կէս
կիլոմետր լայնութեամբ. Սրա ամբողջ մակերևոյթը հաւասար է
19 գետեատին, 1630 ք. սաֆէնի, Բլրի գագաթը հարթ է, հիստի-
սային և արևելեան կողերը պատած են շիկագոյն որձաքարի ուղ-
ղանայեաց լերկ քարտաժանուով, հարաւային կողը, որ նոյնպէս
նաւակների համար անմատչելի է, շատ գեղեցիկ է, որովհետև
տոփի (tuf) անագին կոշկոռները ջրի ազդեցութեամբ բազմազան,
գեղեցիկ ձևեր են ստացել. Հարաւա-արևմտեան կողմը ցածրազիր
մի տափարակ է տարածւում, լճի մակերևոյթից հազիւ երկու
մետր բարձրութեամբ և մօտաւորապէս մի գեսիատին տարա-
ծութեամբ, Բլրի գագաթը ծածկուած է մեծ մասամբ չիչաքարով
և բազալտով, այս պատճառով և բուռականութիւնը շատ աղքատ
է. մինչդեռ ստորին, տափարակ մասում անում են ուռենիներ և
բարդիներ, որոնք գեղեցիկ ճեմելիներ են կազմում, ինչպէս նաև

մի քանի խնձորենիներ ու թթենիներ, բլրի վրայ ոչ մի ծառ չկայ. պատահում են միայն մասընի, ասպիրակ, զանազան ծաղիներ, ինչպէս մեխակ, զանգակածաղիկ և այլն, իսկ ապառաժուս կողերն ու նրանց ծերպերը պատաժ են զաղոնասերմ բոյսերով:

Ամառը Սևանայ կղզին իւր մեղմ, հովաշունչ կլիմայով պահանջելի է, մինչդեռ վեց ամիս տևող ձմեռը՝ անտանելի, մանաւանդ երբ փշում է արևելեան քամին, որ Սոթ է կոչում, Սոթք գաւառի անունով: Այս ժամանակ լինը սաստիկ ալեկոծւում է, նաւազնացութիւնը գժուարանում և նոյն իսկ անկարելի դառնում: Հիւսիսային կողմից էլ երբեմն փշում է «քօլի» քամին, խիստ խռնաւութիւն բերելով: Իսկ ամբողջ աշնան ընթացքում փշում է արևմտեան քամին, որ Արարատեան դաշտից գալով կոչում է «դաշտնի քամի», և չոր է ու ցուրտ:

Պատմական տեսութիւն. —աղբիւրներ. —Սևանայ վանքի վերաբերութեամբ պատմական տեղեկութիւններ գտնում ենք Յովհաննէս կաթողիկոսի, Ասողիկի, Ստեփանոս Օրբելեանի, Առաքել Դաւրիթեցու և այլ մատենագիրների մէջ անցողաբար յիշատակուած: Մի ամբողջական, ամփոփ պատմութիւն մինչև ԺԷ դարը չի երևում, այս ժամանակ միայն կազմուում է մի շատ համառօտ գրուածք՝ «Վէպ ծովակին Գեղամայ և երջանիկ կղզւոյն Սևանայ, որոյ և ընակչացն. ի Զարարիա վարդապետէ Գուլասպեան Բէհրութեան, յաշակերտէ ան. Պողոսի Առաքինապարդ սրբոյ Արհի եպիսկոպոսի Պրուսայի և Նիկոմիդիոյ, յամի տեառն 1825 ի նոյն սուրբ և երջանիկ կղզւով: Այս աշխատութիւնը դեռ ևս չի հրատարակուած: Հազիւ հինգ տարի անցած երևում է համեմատաբար աւելի մանրամասն մի գրուածք. «Պատմութիւն անցից անցելոց Աէվանայ վանուց»: Այս աշխատութիւնը 1870 թուին Եղիա վարդապետ Զալալեանի ձեռքով արտագրուած է կապտագոյն թղթից կազմած մի մեծ մատեանի մէջ, որ պահուում է Սևանայ վանքում, և յաջորդ 1871 թուին տպուած է Վաղարշապատում: Ինչպէս երևում է, արտագրելով մի մեծ մատեանի մէջ վիրոյիշեալ աշխատութիւնը՝ միաբանութիւնը ցանկացել է կազմել մի յիշատակարան հետգնեատէ նշանակելու յիշատակութեան արժանի դէպքերը:

Եւ յիրաւի, Գիւմուշխանեցու պատմութեանը հետևում է Սևանայ վանքի անշարժ կայքերի ցուցակագրութիւնը, յետոյ գալիս է Սևանայ վանական գրադարանի գրացուցակը և ապա «Արժանաւոր պատմութիւն պատահմունն ի մէջ Անապատիս, երթ և եկ միաբանից, թէ վախճանելոց օրական ժամանակագրութեամբ և թէ պայմանագրութիւնք»: Այսաեղ, եօթ երեսների վրայ գրուած

է թէ 1830 և 31 թուականներին ինչ միաբաններ են ընդունուել վանքում և թէ ինչպէս 1851 և 1853 թուականներին մի մի քուրդ Սևանայ վանքում քրիստոնէութիւն են ընդունելի, Սրանից յետոյ բաւականաշահ բաց թերթեր են թողնուած, երևի յիշատակարանը շարունակելու յուսով, որից յետոյ գրուած է. Պատմութիւն Սևանայ, աշխատասիրեաց Յակոր վարդապետ Սիւնեաց ի միաբանութենէ ս. էջմիածնի. ի հայրապետութեան Տ. Տ. Մատթէոսի և ի վանահայրութեան սուրբ անապատիս Յարութիւն բարեջան վարդապետի Մարշանեանց Շիրակցւոյ. 1862 թ. ի Սևան Այս, վաթուն երեսների մէջ ամփոփուած պատմութիւնը, որ կես ևս չէ տպագրուած, մի համառօտութիւն է Մանուէլ վարդապետի աշխատասիրութեան, մի կարևոր յաւելուածով, այն է 1830—1862 թուին եղած վանահայրերի գործունէութիւնը:

Մատեանն աւարտում է այս Յակոր վարդապետի գիրքը թուածք տիրունիքը Խորագիրը Կրող բանաստեղծութիւններով:

Ներկայ վանահայր սրբազն Սարգիս եպիսկոպոս Փիլոյեանը ևս, օգտուելով գլխաւորապէս վերոյիշեալ աշխատութիւններից կազմել է Սևանայ վանքի պատմութիւնը՝ հասցնելով մինչև իւր վանահայրութեան օրերը: Այս աշխատութիւնը տպուեց «Հովիւշ յարաթաթերթի 1906 թուի համարներում»:

Առաւելապէս Զաքարիա վարդապետ Գիւլասպեան Բէհրութեանի աշխատութիւնից քաղելով Յովհաննէս եպիսկ. Շահիամուննեանը իւր «Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ» աշխատութեան մէջ տալիս է Սևանայ պատմութիւնը (Բ. հատոր եր. 308—235).

Կիւմիւշխաննեցու աշխատութիւնից էլ զիխաւորապէս օգտուելով Հ. Ալիշանը իւր «Սիսականում տուել է Սևանայ պատմութիւնը, շատ անցողաբար անցնելով Կիւմիւշխաննեցու պատմութեան աւարտից՝ 1830 թ. մինչև իւր ժամանակի՝ 1890 թ. պատմութիւնը»

Լրագրուների մէջ ևս կան զանազան ճանապարհորդական ակնարկներ ու տպաւորութիւններ Սևանի վանքի մասին, որոնցից նշանաւորը Մուրացանինն է, «Նոր-Դարի» 1891 թ. 130—139 համարներում տպուած:

Հ. Սմբատեանի «Գեղարքունիք» գրքում էլ, բացի վերոյիշեալ ազգիւրներից արտագրուած հատուածներից, կամ նաև Սևանայ միաբանութեան ուղղած մի քանի կոնդակների պատճենները: